

1. Մարզպետարանի նիստի քաղաքացիների նիստումների, բողոքների 2019թ.-ի ինն ամիսների ամփոփագիր

2019թ-ի ինն ամիսների ընթացքում ստացվել է 688 նիստում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 542 քաղաքացի: 509 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 33-ինը մերժվել, 2019թ-ին արդեն իսկ օգնություն ստացած լինելու պատճառով:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 35 քաղաքացի, որից 15-ի խնդրանքը բավարարվել է, 20-ինը՝ մերժվել, /Բնակարանային պահանջի նիստումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 3 նիստումից դրական պատասխան է ստացել 2-ը, մեկ քաղաքացու նիստում մերժվել է:

/Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 7 քաղաքացիներից 5-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 2 նիստում մերժվել է, /նիստումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել են 37 քաղաքացի բոլորի խնդրանքն էլ բավարարվել է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է 12 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 23 քաղաքացիներից, 21 քաղաքացի ստացել են դրական պատասխան, երկու նիստում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 15 քաղաքացի, որից 14-ը ստացել են դրական պատասխան, մեկ նիստում ընթացքի մեջ է:

թ/ Այլ բնույթի 14 նիստում է ստացվել:

Սեփականաշնորհման բնույթի նիստումներ ներկայացրած 2 քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ